«Այբ» ավագ դպրոց

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Քննաշրջան՝ **2023 թ., ապրիլ**
Տևողություն՝ **1 ժամ 15 րոպե**
Հավելյալ նյութ՝ *Պատասխանների գրքույկ*

ՈՒՇԱԴԻՐ ԿԱՐԴԱԼ ԱՅՍ ՈՒՂԵՑՈՒՅՑԸ

Անհրաժեշտ է հետևել *Պատասխանների գրքույկի* կազմին գրված ցուցումներին:
Գրել մուգ կապույտ կամ սև գրիչով:
Պետք է պատասխանել **բոլոր** հարցերին:
Քննության վերջում բոլոր թղթերը հավաքել և հանձնել մեկ տրցակով:

Յուրաքանչյուր հարցի հնարավոր առավելագույն միավորը նշված է հարցի վերջում՝ աջ կողմում:
Հարցերի միավորների ընդհանուր քանակը **32** է:

Այս փաստաթուղթը բաղկացած է **4** տպագիր էջից:

Առաջադրանք 1 Սիրելի՛ դիմորդ, ստորև ներկայացված տեքստը մի հատված է Ալեքսանդր Շիրվանզադեի «Արտիստը» պատմվածքից։ Ընթերցի՛ր այն և պատասխանի՛ր հարցերին։

Զվարճության տաք միջոցին դռների մեջ նկատվեց ինձ համար մի անծանոթ կերպարանք: Ոչ ոք առաջին պահ չնկատեց նրան, բացի ինձանից, որ նստած էի դռների մոտ: Անծանոթը հենց առաջին վայրկյանից գրավեց ուշադրությունս: Ես դիտեցի նրան: Մոտ 16-17 տարեկան մի պատանի էր, նիհար, գունատ դեմքով, կուրծքը փոքր-ինչ ներս ընկած: Հագած էր մուգ կապտագույն գոտևոր, կարճ բաճկոն, որի կուրծքը զարդարված էր ասրյա խաչաձև ծոպերով և նույն գույնի նեղ վարտիք: Ձեռքին բռնած էր մի կակուղ կանաչագույն գլխարկ՝ փետուրով զարդարված, նման այն գլխարկներին, որ դնում են թափառաշրջիկ հույն անդրիավաճառները կամ իտալացի երաժիշտները: Նրա դեմքի գծերը կանոնավոր էին ու նուրբ, աչքերն ունեին ինչ-որ մելամաղձիկ արտահայտություն: Դա այն երջանիկ դեմքերից էր, որոնք հենց առաջին հայացքով մարդու սրտում շարժում են համակրության զգացում:
—Բոն—ջուրնո,— ասաց նա, գլուխ տալով:
—Ոհո՜, արտի՜ստը,— գոչեց ամենքից առաջ բարիտոն Կավալլարոն, որ մի բարեսիրտ մարդ էր՝ մոտ երեսուն ու հինգ տարեկան:
—Արտի՜ստը, արտի՜ստը,— կրկնեցին մյուսները:
Նույն վայրկյանին պար, նվագ ու ծիծաղ ընդհատվեցին, և բոլոր հայացքները դարձան դեպի պատանին:
—Որտե՞ղ էիր, այսքան ժամանակ չէիր երևում,— հարցրեց Կավալլարոն:
—Սպասեցե՛ք, նա տխուր է,— գոչեց Լուիզան և մոտեցավ պատանուն,— էլի ի՞նչ է պատահել, ինչո՞ւ չես մտնում:
—Որտե՞ղ է սինյորա Ստեֆանիան,— հարցրեց պատանին:
Նրա ձայնը հուզված էր, դողում էր: Այդ ձայնի մեջ կար մի սրտաշարժ շեշտ, որ արտահայտում էր հեզության հետ և թախիծ:
—Աա՜, հասկացա,— ասաց Լուիզան,— էլի մայրդ երևի հիվանդ է: Խեղճ պատանի, դու սլանում ես երկինք, նա կպած է երկրին…
—Սինյորինա Լուիզա, ես ձեզ խնդրում եմ ինձ չխղճալ,— գոչեց պատանին վիրավորված,— Սինյորա Ստեֆանիան այստե՞ղ է:
—Մայրս խոհանոցումն է:
Պատանին գլուխ տվեց շնորհալի ձևով ու հեռացավ:

Հարց 1 Գրի՛ր, թե գրական որ մեթոդին է հետևել Շիրվանզադեն իր երկերում: Ինչպե՞ս կբնութագրես այդ մեթոդը (2 միավոր)։

Շիրվանզադեն իր ստեղծագործությունները գրելիս հետևել է իրապաշտությանը (ռեալիզմ), որն արտահայտում է կյանքն այնպես, ինչպես որ կա։ Իրապաշտության գեղարվեստական համակարգի հիմքը տիպական հերոսներին տիպական հանգամանքների մեջ պատկերելու մեջ է։

1 միավոր - գեղարվեստական մեթոդ

1 միավոր - մեթոդի բնութագրություն

Հարց 2 Ինչո՞ւ էին շրջապատի մարդիկ Լևոնին արտիստ անվանում (2 միավոր)։

Լևոնն արտիստ էր՝ հոգով, սրտով, արյունով, ամբողջ էությամբ։ Նա բացառիկ թատերասեր և երաժշտասեր էր, օժտված էր երաժշտությունն ընկալելու ու վերլուծելու անգերազանցելի շնորհով։

Հարց 3 Ի՞նչ կապ ուներ «Մադրիդի շրջմոլիկ» երգը պատմվածքի հերոսի ճակատագրի հետ (2 միավոր)։

«Մադրիդի շրջմոլիկ» երգի հնչյունները արձագանքում են գլխավոր հերոսի՝ Լևոնի հոգեվիճակը։ Երգի՝ վիշտ ու տխրություն, թախիծ ու փոթորիկ հաղորդող տրամադրությունները նույնանում են հերոսի կյանքի մանրամասների հետ։

Հարց 4 Ինչո՞ւ Լևոնը ինքասպանություն գործեց։ Արդյոք համամի՞տ ես պատմվածքի այս վերջաբանին։ Դու ինչպիսի՞ լուծում կառաջարկեիր։ Շարադրի՛ր կարծիքդ հիմնավորումներով (5 միավոր)։

Ազատ պատասխան։

Հարց 5 Հատվածի համար գրի՛ր ամփոփում. քո բառերով շարադրի՛ր, թե ինչ է ասվում այդ հատվածում։ Ամփոփման մեջ ներառի՛ր նաև քո մեկնաբանությունը (5-6 նախադասություն) (5 միավոր)։

Ազատ պատասխան։

Առաջադրանք 2 Սիրելի՛ դիմորդ, ընթերցի՛ր Հովհաննես Թումանյանի «Հայրենիքիս հետ» բանաստեղծությունը և պատասխանի՛ր հարցերին։

ՀԱՅՐԵՆԻՔԻՍ ՀԵՏ

Վաղուց թեև իմ հայացքը Անհայտին է ու հեռվում
Ու իմ սիրտը իմ մտքի հետ անհուններն է թափառում,
Բայց կարոտով ամեն անգամ երբ դառնում եմ դեպի քեզ՝
Մղկտում է սիրտս անվերջ քո թառանչից աղեկեզ,
Ու գաղթական զավակներիդ լուռ շարքերից ուժասպառ,
Ե՛վ գյուղերից, և՛ շեներից՝ տխո՛ւր, դատարկ ու խավար,
Զարկվա՛ծ հայրենիք,
Զրկվա՛ծ հայրենիք։

Խռնվում են մտքիս հանդեպ բանակները անհամար,
Տրորում են քո երեսը, քո դաշտերը ծաղկավառ,
Ու ջարդարար ռհմակների աղաղակով վայրենի,
Ավարներով, ավերներով, խընջույքներով արյունի,
Որ դարձրին քեզ մշտական սև ու սուգի մի հովիտ,
Խեղճ ու լալկան քո երգերով, հայացքներով անժպիտ,
Ողբի՛ հայրենիք,
Որբի՛ հայրենիք։

Բայց հին ու նոր քո վերքերով կանգնած ես դու կենդանի,
Կանգնած խոհո՛ւն, խորհրդավոր ճամփին նորի ու հընի.
Հառաչանքով սրտի խորքից խոսք ես խոսում Աստծու հետ
Ու խորհում ես խորին խորհուրդ տանջանքներում չարաղետ,
Խորհում ես դու էն մեծ խոսքը, որ պիտ ասես աշխարհքին
Ու պիտ դառնաս էն երկիրը, ուր ձրգտում է մեր հոգին—
Հույսի՛ հայրենիք,
Լույսի՛ հայրենիք։

Ու պիտի գա հանուր կյանքի արշալույսը վառ հագած,
Հազա՛ր-հազար լուսապայծառ հոգիներով ճառագած,
Ու երկնահաս քո բարձունքին, Արարատի սուրբ լանջին,
Կենսաժրպիտ իր շողերը պիտի ժրպտան առաջին,
Ու պոետներ, որ չեն պըղծել իրենց շուրթերն անեծքով,
Պիտի գովեն քո նոր կյանքը նոր երգերով, նոր խոսքով,
Իմ նո՛ր հայրենիք,
Հըզո՛ր հայրենիք...

Հարց 1 Նշի՛ր Հովհաննես Թումանյանի ծննդավայրը (1 միավոր)։

Թումանյանը ծնվել է Լոռու Դսեղ գյուղում։

Հարց 2 Նշի՛ր, թե Թումանյանը երբ է հիմնադրել «Վերնատուն» գրական խմբակը, և ովքեր էին նրա մշտական անդամները (2 միավոր)։

Թումանյանը «Վերնատուն» գրական խմբակը հիմնադրել է 1899 թվականին։ Նրա մշտական անդամներն էին ինքը, Ղազարոս Աղայանը, Լևոն Շանթը, Ավետիք Իսահակյանը, Դերենիկ Դեմիրճյանը և Նիկոլ Աղբալյանը։

1 միավոր - «Վերնատուն» խմբակի հիմնադրման թիվը

1 միավոր - Խմբակի անդամների անունները

Հարց 3 Ինչո՞ւ է Թումանյանը բանաստեղծությունը վերնագրել «Հայրենիքիս հետ»։ Պատմական ո՞ր ժամանակաշրջանում է գրվել բանաստեղծությունը (2 միավոր)։

Թումանյանն իր «Հայրենիքիս հետ» բանաստեղծությունը գրել է մեծ եղեռնի անմիջական ազդեցությամբ։ Բանաստեղծն ու իր ընտանիքը եղեռնի օրերին հայ ժողովրդի կողքին էին։ Բանաստեղծի աղջիկները գթության քույրեր էին Էջմիածնում, ուր հավաքվել էին գաղթականները։ Որդիներից մեկը՝ Արտավազդը, 1918-ին սպանվեց Վանում, իսկ ինքը՝ ամենայն հայոց բանաստեղծը, ժողովրդին փորձում էր խաղաղեցնել և հույսեր ներշնչել։

Հարց 4 Բանաստեղծությունից դու՛րս գրիր երեք տարբեր պատկերավորման միջոցի օրինակ՝ դիմացը նշելով տեսակը (3 միավոր)։

Զարկված հայրենիք – մակդիր

Վառ հագած - փոխաբերություն

Ու իմ սիրտը իմ մտքի հետ անհուններն է թափառում – չափազանցություն

(Կան այլ պատասխաններ եւս)։

Հարց 5 Ի՞նչ սկզբունքով է կառուցված «Հայրենիքիս հետ բանաստեղծությունը։ Մեկնաբանի՛ր բանաստեղծական տների կապակցման եղանակը (4 միավոր)։

Բանաստեղծության յուրաքանչյուր տուն արտացոլում է հայ ժողովրդի պատմության մի հատված։ Այդ պատմությունները իրար են հաջորդում տրամադրությունների փոփոխությամբ, որին նպաստում են բանաստեղծական տան վերջնամասում կրկնվող տողերը։

Այսպես՝ առաջին տան մեջ բանաստեղծը ներկայացնում է հայ ժողովրդի ողբերգական դրվագներից մեկը. մեծ եղեռնի օրերին գաղթականների ուժասպառ շարքերը։ Կրկնվող տողերն արձագանքում են հեղինակի հուսահատ տրամադրությունները. Զարկվա՛ծ

հայրենիք / Զրկվա՛ծ հայրենիք։
Երկրորդ տան մեջ ցավի տրամադրությունն ավելի են սաստկանում՝ հայ ժողովրդի պատմական դրվագները բնորոշելով «ավար», «ավեր», «արյուն», «սև», «սուգ» բացասական երանգ ունեցող բառերով։ Շարունակվում է առաջին տան մեջ կրկնվող տողի տրամաբանությունը. Ողբի՛ հայրենիք /Որբի՛ հայրենիք։
Երրորդ և չորրորդ տներում կտրուկ փոխվում են ցավ ու վշտի տրամադրությունները։ Հայ ժողովրդի ողբերգական անցյալին փոխարինելու են գալիս հուսավառ ներկան և հզոր ապագան։ Երրորդ տան մեջ մեծ կշիռ է ստանում «Հառաչանքով սրտի խորքից խոսք ես խոսում աստծու հետ» արտահայտությունը, որը կարծես նարեկացիական շնչով հնչեցնում է ողջ հայության «մեծ» խոսքը։

Հարց 6 Բացատրի՛ր 1-ին եւ 4-րդ տների ավարտական տողերի («Զարկվա՛ ծ հայրենիք, Զրկվա՛ ծ հայրենիք» եւ «Իմ նո՛ ր հայրենիք, Հզո՛ ր հայրենիք») կապը տվյալ բանաստեղծության համապատասխան տների բովանդակության հետ (4 միավոր)։
Առաջին և չորրորդ տների տրամադրություններն արտացոլում են Թումանյանի հակադիր հոգեվիճակները. «ուժասպառ», «տխուր», «դատարկ» ու «խավար» մակդիրների խտացմամբ մեզ են պատկերանում մեծ եղեռնի սարսռեցնող տեսարանները և դրանց արձագանքները բանաստեղծի հոգում։ Իսկ ահա «վառ», «լուսապայծառ» ու «կենսաժպիտ» բառերի միջոցով մեզ է փոխանցվում բանաստեղծի մեծ կենսասիրությունը, որը հնչում է որպես պատգամ՝ ուղղված ապագա սերունդներին։